

տեղեկացաւ զէութիւն բանին եւ ոչ ետ սպա-  
նանել զնա իբրեւ զմահապարտ . այլ ետ զՈւ-  
ռումէլու պէկլէբպէկութիւնն . եւ առաքեաց  
35 զնա ի Պօսնայ : Որ եւ անդ բազում վնաս եւ  
չարագործութիւնս արարեալ մեծ հարկադա-  
հանջութիւն եղ ի վերայ երկրին , պէսպէս զու-  
լում եւ պէտէհաթ եւ նոր չարիս եւ ծանր բե-  
ռինս զնէր ռայէին . որ եւ զՈւռումելի աւի-  
40 րեալ քանդեաց եւ ամայի դարձոյց , զմարդիկն  
տղքատացոյց որպէս զԱնատօլուն<sup>1</sup> :

Եւ անտի եկն ի Սիլիստրայ , Իպրայէլ եւ  
այլ քաղաքն Թունայի եզերայս . եւ սկսաւ չար  
խորհել վասն Լէհու : Եւ զնացեալ ի Ղարին ,  
45 ասէ . Տուր ինձ հրաման եւ զօրք , զի երթայց  
ի վերայ Լէհու եւ առից զլրէժն Օսմանայ եղ-  
րօր քս : Եւ նա դարձեալ ստեաց երդմանն եւ  
ասէ . Գնա . եւ տեսից զքաջութիւն քս :

բ. ՄԱՀ ԶԻԿՄՈՒՆՏԱՅ . ԳԱՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԼԱՏԻՍ-  
ԼԱԻԻ

Իսկ ի թվին ՌՁԱ. (1632) մեռաւ նախ  
50 թագուհին Լէհի . ապա Զիկմունտ դռալն :  
Բայց տեսչութեամբն Աստուծոյ եւ նախախնա-  
մութեամբ , այլ եւ հաճութեամբ ամենայն իշ-  
խանաց եւ զօրաց նստաւ յաթոռն հայրենի ար-  
ժանաժառանգն Վլատիսլաւ . եւ եղև թագա-  
55ւոր Լէհաց երկրին :

40 զմարդիքն : — 48 զնայ : — 53 արժանաժառանկն :

<sup>1</sup> Գր. Գարանաղցի զովութեամբ կը խօսի Ապա-  
գայի մասին . բարեկամ էր Հայոց . օգտակար եղած է  
նաեւ ի Պոսնիա եւ ի Ռումելի :